Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՇՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզ
Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան
թիվ 28 հիմնական դպրոց
V «Բ» դասարան

Առաքելյան Նվարդ Դավիթի

«2022 - 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուսումնական տարում V «Բ» դասարանում սովորում է 24 աշակերտ (13-ը՝ տղա, 11-ը՝ աղջիկ): Կրթական-դաստիարակչական աշխատանքների առանցքում դրված են տարրական օղակից հիմնական օղակ փոխադրված աշակերտների ուսումնական պահանջների բավարարումը, դասարանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտին հետևելը և վերջինիս ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Մշտապես ուշադրության կենտրոնում եմ պահում աշակերտների կարգապահությունը, սովորողների կողմից բարձրաձայնված հարցերի քննարկումը: Աշակերտները, բնականաբար, ունեն բնավորության տարբեր գծեր, խառնվածքի տարբեր տիպեր, սակայն վերջինս չի խանգարում միմյանց և ուսուցիչների նկատմամբ հարգալից ու սրտացավ վերաբերմունք ցուցաբերելուն:

2 ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնական տարվա ընթացքում ուսումնադաստիարակչական աշխատանքների վեկտորը պետք է ուղղված լինի դասարանի սովորողների միջև հավասար պայմանների ապահովմանը, աշակերտ-ուսուցիչ-ծնող կապի ամրապնդմանը, աշակերտներին հուզող խնդիրների վերհանմանը, աշակերտների՝ ոչ հարգելի պատճառով բացակայությունների կանխմանը, հայրենասիրական և հայրենատիրական ոգու ամրապնդմանը, մեկը մյուսի նկատմամբ կարեկից և ընկերասեր լինելուն՝ հաշվի առնելով աշակերտի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն - Աշակերտների հետ զրուցելիս, ինչպես նաև դասղեկական ժամերի շրջանակներում կարևորել մարդու հոգևոր պահանջմունքների և հոգևոր արժեքների դերը՝ մատնանշելով, որ յուրաքանչյուր արժեքի հիմքում գիտելիքն է, խելքը, ինչը մարդու անբակտելի մասն է կազմում, և ոչ ոք չի կարող մեզնից խլել:

3.2 Գեղագիտական դաստիարակություն - Ոչ միայն դասղեկական ժամերի, այլև էքսկուրսիաների, թատրոններ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու միջոցով երեխաների մոտ զարգացնել գեղեցիկի նկատմամբ հետաքրքրությունը, զարկ տալ գեղագիտական կրթությանը և հոգևոր դաստիարակությանը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն – Ուսումնական տարվա ընթացքում նախատեսված բաց դասերի, միջոցառումների, էքսկուրսիաների միջոցով նպաստել

հայրենասեր ու իրավագիտակից քաղաքացու կերտմանը: Ուշադրություն դարձնել պետականաշինության հիմքերում գտնվող մեծանուն հայերին, պետական տոներին և հիշատակի օրերին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն – Մշտապես հետևել սովորողների կեցվածքին, ֆիզկուլտուրայի դասաժամերին հավուր պատշաճի մասնակցությանը, դասաժամերի ընթացքում աշակերտական գրասեղանի շուրջ նստելու ձևին, ինչպես նաև համագործակցել ֆիզկուլտուրան դասավանդող ուսուցչի հետ՝ կազմակերպելով սպորտլանդիաներ, միջդասարանային մրցույթներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն – Դասղեկական դասաժամերի ընթացքում, ինչպես նաև աշակերտների հետ էքսկուրսիաներ գնալիս զրուցել աշխատանքի կարևորության, հենց աշխատանքի շնորհիվ ստեղծվող բարիքների, պատմամշակութային կոթողների մասին՝ հավելելով, որ առանց աաշխատանքի անհնար է մարդավայել ապրել: Մեծ կարևորություն տալ աշխատանքային իրավունքների և պարտականությունների մասին զրույցին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն - Աշակերտների հետ հաճախ զրուցել բնության և շրջակա միջավայրի պահպանության, բնությունը մեր տունը համարելու մասին՝ միաժամանակ բացատրելով, որ մեր կողմից արված յուրաքանչյուր անփույթ քայլ կարող է միլիոնավոր տարիներով վնաս հասցնել բնությանը:

4.Դպրոց - ընտանիք կապը - Ուսումնական տարին մեկնարկելուն պես կազմակերպել ծնողական ժողովներ՝ վերջիններիս անցկացումը պարբերական դարձնելով: Ժողովների ընթացքում կարևորել ուսուցչի և ծնողի համագործակցությունը՝ ի նպաստ աշակերտի լավագույն շահի: Ուշադրություն դարձնել նաև ծնողխորհրդի նախագահի և անդամների աշխատանքին ու մյուս ծնողների հետ համագործակցությանը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետ	Կատարողներ
1-ին շաբաթ	Ծանոթություն աշակերտների հետ՝ SWOT վերլուծության մեթոդի կիրառմամբ: Դասացուցակի տրամադրում, կազմակերպական հարցերի քննարկում:	Սեպտեմբեր	Դասղեկ
2-րդ շաբաթ	Վարքի կանոններ և առաջիկա բաց դասի անելիքների քննարկում:		Դասղեկ
3-րդ շաբաթ	Կազմակերպել բաց դաս՝ «Չպիտի կոտրվենք» թեմայով:		Դասղեկ
4-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ Վանաձոր» թեմայով:		
5-րդ շաբաթ	Զրույց՝ «Ուսուցիչ՝ կյանքի կենարար աղբյուր» թեմայով:	Հոկտեմբեր	Դասղեկ
6 -րդ շաբաթ	Զրույց՝ «Կարևորագույն արժեքներ» թեմայով:		Դասղեկ
7-րդ շաբաթ	Կազմակերպել ցերեկույթ՝ «Աշնանային ներկապնակ» թեմայով:		Դասղեկ
8-րդ շաբաթ	Զրույց՝ «Ո՞վ է վստահելի ընկերը» թեմայով:		Դասղեկ
9-րդ շաբաթ	Զրույց՝ «Եթե ունեմ իրավունք, ապա ունեմ նաև պարտականություն» թեմայով:	Նոյեմբեր	Դասղեկ
10-րդ շաբաթ	Զրույց՝ նվիրված ազնվությանն ու անկեղծությանը:		Դասղեկ
11-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես ունեմ երազանքներ» թեմայով:		Դասղեկ
12- րդ շաբաթ	Զրույց՝ «Ինչու՞ եմ սիրում դպրոցը» թեմայով:		Դասղեկ, ուս□ գ ծ ո վ փո խտն օ ր ե ն
13-րդ շաբաթ	Հակառակ սեռի նկատմամբ հարգանքի սերմանում:	Դեկտեմբեր	Դասղեկ
14- րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ երազանքների մասնագիտությունը» թեմայի շուրջ:		Դասղեկ
15-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես իրազեկված եմ, ուրեմն պաշտպանված եմ» թեմայով:		Դասղեկ, բուժքույր
16-րդ շաբաթ	Ամանորյա ցերեկույթ:		Դասղեկ
17-րդ շաբաթ	Զրույց՝ «Կարգապահ ես, ուրեմն հայրենասեր ես» թեմայի շուրջ:	Հունվար	Դասղեկ
18-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ սիրելի մարզաձևը» թեմայի շուրջ:		Դասղեկ, ֆիզ-կուլտուրայի

			ուսուցիչ
19-րդ շաբաթ	Բաց դաս՝ «Հայոց բանակի զինվոր, շնորհակալ ենք» թեմայով:		Դասղեկ
20-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես պատասխանատու և վստահելի ընկեր եմ» թեմայի շուրջ	Փետրվար	Դասղեկ
21-րդ շաբաթ	Հիգիենայի մասին զրույց:		Դասղեկ, բուժքույր
22-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ ընտանիքը» թեմայով:		Դասղեկ
23-րդ շաբաթ	Զրույց՝ «Գիրքը՝ իմ լավագույն խորհրդատու» թեմայով:		Դասղեկ, գրադարանա-վարուհի
24-րդ շաբաթ	«Դռները բացեք, գարուն է գալիս»:	Մարտ	Դասղեկ
25-րդ շաբաթ	Բաց դաս՝ «Մայր, իմ անպարագիծ սեր» թեմայով:		Դասղեկ
26-րդ շաբաթ	Զրույց՝ «Լինենք խնայող» թեմայով:		Դասղեկ
27-րդ շաբաթ	Մրցույթ՝ «Ո՞վ է իմ հեքիաթի հերոսը» թեմայի շուրջ:	Ապրիլ	Դասղեկ
28-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ լավագույն ընկերը» թեմայով:		Դասղեկ
29-րդ շաբաթ	Պաստառների պատրաստում՝ «Հայն ապրելու է□□□» թեմայով:		Դասղեկ
30-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես նեղանում եմ, եթե □□□» թեմայի շուրջ:		Դասղեկ
31-րդ շաբաթ	Զրույց՝ «Աշխատանք՝ բոլոր բարիքների մայրը» թեմայով:	Մայիս	Դասղեկ
32-րդ շաբաթ	Տեսադաս՝ «Ավարտում ենք V դասարանը□□□»:		Դասղեկ
33-րդ շաբաթ	Զրույց՝ «Երազում եմ մեկնել □□□» թեմայի շուրջ:		Դասղեկ
34-րդ շաբաթ	Զրույց՝ «Բարի գալուստ, ընթերցասերի ամառ» թեմայով:		Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը:
Համադպրոցական միջոցառում՝ նվիրված Գիտելիքի օրվան:
Բաց դաս՝ «Չպիտի կոտրվենք»:
Ցերեկույթ՝ «Աշնանային ներկապնակ» թեմայով:
Կազմակերպել թանգարանային էքսկուրսիա՝ «Արվեստի ու գրականության հատման կետում» թեմայով:
Ամանորյա ցերեկույթ:
Բաց դաս՝ «Հայոց բանակի զինվոր, շնորհակալ ենք» թեմայով:
Բաց դաս՝ «Մայր, իմ անպարագիծ սեր» թեմայով:
Մրցույթ՝ «Ո՞վ է իմ հեքիաթի հերոսը» թեմայի շուրջ:
Տեսադաս՝ «Ավարտում ենք V դասարանը□□□»:
Գիտաճանաչողական էքսկուրսիա՝ բնության գրկում:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը
Կազմակերպչական հարցեր	1□ Ծնողների հետ ծանոթություն: 2. Ծնողներին իրազեկել նոր ուս. տարվա անելիքների մասին: 3. Ընտրել ծնողխորհրդի կազմ: 4□ Դասագրքերի կոկիկ պահպանում:
Կազմակերպչական հարցեր Ուս. տարվա աշխատանքներ:	1. Զրույց՝ աշակերտների միջանձնային հարաբերությունների մասին: 2.Ծանոթացնել 2022-2023 ուստարվա աշխատանքներին:
Հիգիենան դպրոցում և տանը	Աշակերտների արտաքին տեսքի, դպրոցական համազգեստի, հիգիենայի մասին հարցերի քննարկում:
Կազմակերպչական հարցեր	Քննարկել սովորողների վարքը ոչ միայն դպրոցում, այլև տանը: Կարևորել օրվա ռեժիմի ճիշտ բաշխումը և ժամանակի կառավարումը:
Առաջին կիսամյակի ավարտ:	Ուս. տարվա առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքների քննարկում:
Երկրորդ կիսամյակի սկիզբ:	Քննարկել առաջին կիսամյակի արդյունքները՝ մշակելով մեխանիզմներ՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:
Ծնող-ուսուցիչ համատեղ աշխատանքի միջոցով՝ . վերացնել ի հայտ եկած թերացումները:	Ծնողների ներգրավումը ուսումնադաստիարակչական պրոցեսում:
Քննարկել ուսումնական տարվա ընթացքում արձանագրված բացթողումները:	Ծնողների հետ քննարկել սովորողների բարոյահոգեբանական մթնոլորտին և ուսումնառությանը վերաբերող հարցեր:
2022-2023 ուս. տարվա ավարտը և հետագա անելիքները:	Ծանոթացում՝ ամառային արձակուրդների ընթացքում կատարվելիք աշխատանքներին:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Նախագահ՝ Ավետիսյան Նառա
անդամ՝
անդամ՝

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Քննարկվող հարցեր	Ծնողական խորհրդի նիստի համառոտ բովանդակությունը
2022-2023 ուսարվա կատարվելիք աշխատանքները	Ապահովել աշակերտ-ուսուցիչ-ծնող եռամիասնությունը, քննարկել ուսումնադաստիարակչական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու մեթոդներն ու հնարները: